

ԴՐՈՇԿԿ

Հ.Յ.Դ. ԲԻՆՈՐՅԱՆ
ՊՐԻՆՏԻՆԻ
A. R. F. BUREAU
LIBRARY

„ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ “ ՕՐԳԱՆ

ՍԱՍՆՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԿՈՏՈՐԱԾԸ

ԿՈՒՒՒ ՆԱԽԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. Մի քանի տարիներէ ի վեր Տալուրիկ և նրա օրինակին հետևելով՝ այս տարի ևս Ֆէլիքոզան, Իշխնձոր, Աղբին, Ծիթենք, Շէնիկ, ՍՀմալ բազմաչայ գիւղերը կը մերժեն բացարձակօրէն կառավարութեան տուրք և շրջակայ քիւրդ ցեղապետներուն խափարէութեան (ոստիկանական) հարկ վճարելը: Նոցա կաշխատեն հետևել Շատախի, Բերմի, Խուլփ, Խէյան և Փսանայ գաւառի հայ բնակիչները և այս նպատակաւ կանաչաւուն և կհալածեն ամեն տեղէ հարկահան ոստիկանները: Փսուրի տեղապահ կառավարիչը (գայմագամ) 37 ոստիկաններով և քիւրդ հեծեալներով մի առ մի կը ձերբակալէ բոլոր Խուլփի և Խէյանայ հայ մեծամեծները, կը գայ Իշխնձոր, կը բռնէ 4-5 հոգի և կը պահանջէ Տալուրիկէն Գասպար, Խաչօ, Փուրի, Գեղի, Գէլիէ, Գուհանէն Կերօ (Պետօյի տնէն) և Շէնիկէն Տէր Գրգօն: Սասունցիք ոչ միայն կը մերժեն յիշեալ անձինքը յանձնել, այլ և Իշխնձորի մէջ յարձակվելով գայմագամի վրայ, կը սպաննեն ոստիկանները և 12 քիւրդերը, միւսները կը փախչին:

2. Մի քանի տարիներէ ի վեր սասունցոց քիւրդ աշիրաթներու (ցեղ) ընդդէմ ցոյց տուած թշնամական վարմունքը, յաճախակի կռիւները և երկուստեք տեղի ունեցած աւարառութիւնները, տարեկան տրոց (խափարութիւն) մերժումը, նամանաւանդ Տալուրիկի անցեալ տարուայ պատերազմը, ուր հարկուաւոր քիւրդեր ընկան, շրջակայ ցեղերը վերին աստիճանի կատղեցուցած և ի վրէժ գրգռած էին:

3. Բաղէշի կուսակալութեան տուած տեղեկութիւններէն կառավարութիւնը տեղեկացել էր, թէ օտարական զանազան անձնաւորութիւնք կը պահուին Սասնոյ մէջ, որոնք կաշխատին ժողովուրդը գրգռել ընդդէմ կառավարութեան և արտասահմանէն զէնքեր կը տեղափոխեն. այստեղ և թէ արդէն Անտղի սարը կազմուած է հայ հրոսակային խումբ մի, որ մշտական յարձակումներով սարսափ կազդեն շրջակայ քիւրդերու վրայ:

ՄԱՐՏԻ ԸՆԹԱՑԻՔ

Բաղէշի կուսակալանիստ ժողովի մէջ ուր ներկայ էին Բազարանցոց, Ռըշկոտանցոց, Խարըկանցոց, Փէնջարի, Ծովասարի վերայ բնակող Խարզանցոց Բշէրեկի մեծ աշիրապետն, Բէլիկցոց պետերը, Խոյթի Բոնալիփ բոլոր իշխանները, Մօղըկանցի, Խէչանցի գլխաւորները, Բազըկանցոց, Ժաճըգանցոց, Խըկանցոց, Խէյանցոց և Սիլվանիկի բոլոր ցեղապետները և հիւսիսային բերդերու Համիդիէյի հեծելագունտի Բէհմէդտին փաշան, այն որոշ եզրակացութեան յանգեցան, որ Սասունը իւր անառիկ դիրքով, անմատչելի սարերով և արիւնուշտ ժողովրդով միշտ գլխաւոր վտանգ մ'է Օսմ. կառավարութեան, որոյ ըմբոստ օրինակին կը հետևին դրացի գաւառացիք. ուրեմն հարկաւ անհրաժեշտ է, որ ապստամբութիւնը խեղդուի դեռ իւր օրօրոցի մէջ, քանի դեռ նոքա բոլորովին անպատրաստ են: Հրաման տրուեցաւ բոլոր քիւրդ ցեղերուն, որ անյապաղ գումարուին և չորս կողմէ յարձակուին Սասնոյ վրայ: Աներևակայելի արագութեամբ բոլոր շրջակայ կուսակալութեանց զօրքերը դիմեցին ի Մուշ, ուստի միայն 7869 հետևակներ, 1000-ի չափ հեծեալներ և 150 թնդանօթներ ուղևորուեցան ի Սասուն: Ռուսական և Պարսկական սահմանագլխէն սկսեալ բոլոր ցեղերը գունդագունդ դիմեցին այնտեղ միայն Բուլանլիսի Հայդարանցիք 300 հեծեալներով եկան, որով կարելի է գաղափար կազմել այն ահեղ բազմութեան վրայ, որ մէկ ակնթարթի մէջ պաշարեցին Սասուն գաւառը: Տեղացիք տեսան այդ փոթորկաբեր ամպերը, որ կը կուտակուէին իրենց ազատ սարերու վրայ, չորս կողմէն դիմող լճաբերները սարսափելի տեղեկութիւններ կհասցնեն. անոնք անգիտակից չէին թշնամու բազմութեան մասին, սակայն ուրախ սրտով կը սպասէին այդ «Մեծ որսին», ինչպէս իրանք կանաւնէին (առանց մտքէ անցնելու, թէ իրենք ալ կարող էին ուրիշին որս ըլլալ): Դեռ արտերը չհնձած, ուրեմն մէկ օրուայ իսկ պաշար չունենալով, առանց վառօդի և գնտակի մեծ պաշարի բօքիկ ոտերով, մէկ շապիկ հագին, ապաւինելով իրենց անառիկ սարերուն, իրենց քաջ բազուկներուն և որոտացող շէշխանաներուն և երկսայրի նաջախներուն:

Այստեղ գումարուած քիւրդերու թիւն է մօտաւորապէս 43000, Օսմանեան կառավարութեանէն զէնք և ռազմամթերք ստացած, իրենց ցեղապետներու և շէյխերու (շէյխը՝ Զիլան) առաջնորդութեամբ, թուրք

բանակի 12300 զորաց: Տետ. իսկ հայոց թիւն անյայտ է, որովհետեւ կանայք և մանկունք ալ կը կուռին: Ահա զէնք՝ ձորել և բունել կրցողներու թիւը. 304 հրացանակորներ Տալուրկէն՝ իւր գիւղերով, 741 Քլլի գիւղէն, 209 Շէնիկէն, 160 Սհմալէն, 180 Իշխնձորէն, 34 Հէթիկէն, 120 Աղթիսէն և 208 Ալեանցոց գիւղէն:

27 յուլ: Վալհկանցիք կը թալանեն Շէնիկի ոչխարները: Հայերը յետեւէն պնդելով կը խլեն իրենց աւարը, կայրեն Կուրդը կ'ամարանոցի բոլոր քիւրդ վրանները և ահագին քանակութեամբ ոչխար և տաւար կը բերեն: Երկար արիւնահեղ կռիւ տեղի կունենայ. 2 հայ, 34 քիւրդ սպանուած են:

2 Օգոստ.: Շէնիկ և Սհմալ դաշտային, հետեւաբար ոչ ամուր գիրքի տէր և ենթակայ առաջին յարձակման, կը քօչեն դէպի անառիկ Գէլի: Քիւրդերը ահեղ բազմութեամբ կը յարձակուին, կայրեն Շէնիկ (106 տուն) և Սհմալ (85 տուն) և կը յարձակուին փախստականներուն վրայ: Կուրդ կը տեւէ 7 ժամ մինչև օգնութեան կը հասնին Անտրէն հրոսակները և 400 Գէլեցիները. քիւրդերն անհնարին կոտորածով կը փախչին Օսման. վրաններու տակ, թողնելով դաշտի վրայ 354 դիակներ, որոնք մաս առ մաս կը թրատուին կատաղե Շէնիկցոց նախններու հարուածներու տակ: Հայոց կողմէն կորուստն է 17 Շէնիկցի, 8 Սհմալցի, 6 Գէլեցի, 3 Ալեանցի, 8 կանայք:

3 Օգոստ. Ըստ Տաճկ. երեկոյան ժամը 9-ին հնչեցին պատերազմական փողերը. յարձակում միւսնոյն ժամանակ Տալուրկի, Իշխնձորի, Աղբիւի, Անդրի վրայ: Կուրի կէտ նպատակի Գէլիկի շաւարորիկ գագաթէն ռումբեր կը տեղան կուռին անմասն շատախու գիւղերուն վրայ: Սասնոյ լեռները միգապատ ամպերով ծածկուած են, կարծես հրաբխային լաւանք կը հոսեն ամեն կողմէ. արեան գետեր, կարկառահար դիակներ: Աէս գիշերին կը գրաւեն Ալեանցոց գիւղն և կայրեն (165). կէս օրէն Գէլեցի Պետոսի տունը կայրուի. Պետո միայնակ 27 հոգի սպանելէ վերջ, երբ այլևս վառօդ չի ունենար, սուսերամբի կը յարձակուի և կը սպանուի՝ 13 վէրքեր ստանալէ յետ: Գէլեցիք կը յաջողին յետ մղել թշնամին, որ 26 ժամ անընդհատ կուռելէ յետ, կը թողու անհամար դիակներ ամեն կողմ միայն ի Գէլի յԱլեան և յԱնդոք 760 (բոլոր վերակորներ կը սպանուին): Հայոց կորուստն է 23 գէլեցի, 15 ալեանցի, 14 շէնիկցի, 9 սհմալցի, 7 իշխնձորցի, 6 աղբեցի, 17 կանայք և 9 մատաղերամ մանուկներ, ընդամենը ձիշտ 100:

4, 5, 6 Օգոստ. Մշտական յարձակումներ երկուստեք: Միշտ հայերը յաջող են. անթիւ քիւրդ սպանուածներ: Հայերու կողմէն կը սպանուին միայն 5 մարդ, 3 կին:

7 Օգոստ. Ուրբաթ լինելով՝ զինադուր եղաւ Օսմանցոց կողմէն: Հայերը՝ Գէլեցիք, Իշխնձորցիք, Ալիանցիք, Շէնիկցիք, Սհմալցիք կը գումարուին յԱնդոք. իսկ Տալուրիկցիք իրենց շրջակայքով ի Քընֆըն-Քար: Անդրք Գէլիէն 45 լոպէ. արևմուտք, առանձին գագաթմ'է, կից հարաւէն Կեփի անապատ սարի հետ, յարմար

պաշտպանուելու, ընդարձակ արօտներ լերան գագաթին, հացի և աղի բացարձակ չգոյութիւն. այնտեղ հաւաքուած են 21745 հոգի բազմութիւն, ծեր թէ մանուկ պր թէ կին, իրենց քօչերով միակ ուտեստն է մածուն, բանջար և անաղ միս: Անտանելի նեղութիւններ և անտանելի ցուրտ:

8 Օգոստ. Ահեղ յարձակում: ռումբերու որոտներէն կը թնդան սար ու ձոր: Շատախի բոլոր գիւղերու հասունցած արտերը և խոտի դէզերը կայրեն քիւրդ և օսմանցի հեծեալները: Գրչով աննկարագրելի է կատաղած մահամեղականներու բարբարոսութիւնը թշուառ և անպաշտպան ժողովուրդեան վրայ: Յուսահատութեան աղաղակները, լաց ու կոծն ահեղ մարտի միջեց կը հասնին Անդրք և կատաղի զայրոյթով կը լեցնեն բոլորի սրտերը: Գեղաշէն կայրուի ռումբերու հարուածներու տակ: Սոսկալի կոտորած ի Սպղանք (Տալուրիկ), ուր հայ մը պաշտպանել ջանալով քիւրդ ցեղապետ մը յարձակողներէն, կսպանուի հարազատ եղբօր ձեռամբ: Անթուրի կորուստներ, օգոստ. 3-ի ջարդէն շատ աւելի: Անթիւ զօրաց դիակներ. քիւրդերը կը փախչին, բայց Օսմանցիք անոնց միւս կողմէն թնդանութեամբ կմղեն ի մարտ: Անուր շիտութիւն, իրարանցում: Կուրն անընդհատ 19 ժամ կը տեւէ:

10, 11, 12 Օգոստ. Մշտական յարձակում. անթիւ սպանուածներ. հայերու վառօդը իսպառ կը վերջանայ: Մի քիչ Տալուրիկէն կուղարկուի: Անտանելի սով:

13 Օգոստ. Ամենէն ահեղ կռիւր, որ անընդհատ 27 ժամ կը տեւէ. յարձակում միաժամանակ ամբողջ Սասնոյ չորս կողմերէն: Կեղոնը կրկին Գէլի և Անտրք: Ամայի Գէլի խիստ նեղ կացութեան մէջ է: Անտրքէն կը հասնին օգնութեան: Աներևակայելի քաջութիւն ու տոկունութիւն հայերու կողմէն: Նշանաւոր հանդիսացան Շէնիկցի Գրգօն, հրոսակներէն՝ Աղամը (18 տարեկան), Գէորգն և Կրպօն: Կը պատմեն, թէ այդ գոռ կուռի ատենը, երբ թշնամին սիսաւ փախուստ տալ պատանի դիւցազնը՝ Աղամ, կայնած քարաժայռի մը վրայ, որոտացնելով ահեղ բերդանկան, կաղաղակէ. «Շներ, վատեր, փախէք, ըսէք ձեր մեծին, որ գայ այստեղ իւր սև զինուորներով: Սասունցիք ամենու համար ունին տաք գնտակներ: Անմիտներ, ինչո՞ւ դատարկ տեղ կը թափէք ձեր արիւնը. օրը տաքցեր է և հունձի ժամանակն հասեր. թողէք այս երկիրը, փախէք Արաքստան: Փախէ՛ք, ձեզմէ ոչ արու պիտի թողնենք, ոչ ալ էգ:» Երկուստեք կորուստն ահագին էր. միայն ի Գէլի և յԱնտրք սպանուել են 675 քիւրդ և 236 հայ, մեծ մասամբ Գէլեցիներ և քանի մը հրոսակներ: Կուրի դաշտի տէր դարձեալ հայերն են, բայց խեղճերու ռազմամթերքն արդէն իսպառ կը հասնի: Կը կողոպտուի Գէլին (360 տուն) և անոր եկեղեցին: (Քիւրդերը կը հաւատան, թէ արծաթագգեաց հեծեալ օրիորդ մը նիզակն ի ձեռին, ահեղ մարտնչող՝ անյայտացաւ եկեղեցոյն մէջ:

14 Օգոստ. Քիւրդերը բացարձակ կը մերժեն երկարել կռիւր և կը սպառնան Օսմ. զօրաց: Փաշան պատերազմներ կը զրկէ յԱնտրք, Սուլթանի կողմէն ամենքին նե-

րողութիւն խնդրել, եղած վնասները պետական գանձէն դարմանել և Սասունը համիզդ ազատ կացուցանել խոստանալով:

Մուրատ կը կանչվի Տաւրոսիկէն: Կառաւորիկէ խաղաղութիւն, յայտնելով թէ առանց հացի և ղնամթերք պաշարի անկարող են երկար դիմադրել: Գրգօն կռիւ կը պահանջէ, յայտարարելով, թէ օսմանին չէ կարող մոռանալ իւր կորուստները վաղ թէ անագան պիտի աշխատէ պատժել զմեզ, նոյն րոպէին, երբ մենք անպատրաստ կը լինինք. լաւ է, որ այսօր խառնենք մեր արիւնը մեր եղբայրներու արեան հետ և գլուխ չծռենք անգութ օտարներուն: Հնորհակալ ենք այն բարեսրբ տութենէն, որ Սուլթանը ցոյց կուտայ մեզ՝ փոխարինել ուզելով անձնական գանձէն մեր կորուստները: Հեռացէք մեր երկրէն և խաղաղութիւնն ինքն ըստ ինքեան տեղի կուենայ:

15 Օգ. փաշան յաջորդ օր անձամբ 500 հեծեալներով կուգայ Անդոքի ստորոտը և կը պահանջէ, որ մի քանի անձինք գան բանակցութեան. ուղղամթերքի հացի բացարձակ չգոյութիւնը կ'ստիպեն գոռոզ Սասունցուն զիջանել բանակցութեան. կընտրուեն 184 հըրացանակիրներ և կ'իջնեն դաշտ. խօսակցութեան պահուն Գրգօն, որ կը դիտէ Աստորի սարէն այս ամենը, կը տեսնէ զարմացմամբ, որ բլրակներու մէջէն գունդագունդ բանակներ կը պարփակեն գնացողները, և հրացանի որոտմամբ կազդարարէ անոնց. բայց այլ ևս ուշ էր: Յուսահատ և ահեղ կռիւ կը ծագի, դաշոյններով, սուրերով և նաջաններով կուրծք առ կուրծք: Լեռնաման դիակներով կը ծածկուի դաշտը: Կը տեսնէ Գրգօն ծերունի մը, որ թևերը քաշած, Գամակեան ահեղ խենջարն ի ձեռին իրարու հետ դիակներ կը սրփռէ և անընդհատ կառաջանայ. անոր ետևէն կերթայ իւր որդին, դայթելով դիակաց մէջ և աղաղակելով. «Հայր, հայր քաջազունք այսպէս կոստնուն դիականց վերայէն»: Անոնցմէ ոչ մին կենդանի չի ձերբակալվիր, ոչ որ կուռէն խոյս չի տար, այլ ամենքը կընդունեն նահատակի պսակը արեամբ ներկուած, եռապստիկ թշնամիներու հոգիներ իջնցնելով ի թափս դժոխոց:

22 Օգ. Անդոք կը պաշարուի Գէլըցիք, Իշխնձորցիք և Սհմալի կէսը կը դիմեն ի Ֆրուփո-Քար: Գրգօն իր շէնիկցիներով Ալեանցոց ու մնացած Սհմալցոց հետ կը ամրանայ իւր տեղը, կուռելով կատաղօրէն ամբողջ 6 օր առանց վառօդի, քարերով և խենջարներով: Անտունդ, յոգնած և ուժասպառ մարդիկները կընկնին, անոնց կը փոխարինեն կանայք, կատարած բորեաններու նման, որոց ձագերը յափշտակել կուզէ գիշախանձ վագրը:

Անհնար լինելով այլևս կենալ անօթի և մերկ, Գրգօն կը յանձնէ Աստորի պաշտպանութիւնը կանանց և ինքը մնացեալ քաջերով բօքիկ, մերկ, անօթի, ուժասպառ, առանց վառօդի, առանց գնդակի կիջնէ Խուլի և Խէյանք գաւառը հաց ու պարէն և ըստ կարելոյն ուղղամթերք ստանալու նպատակով: Կանցնի Կեփի, կը հասնի Հեղին:

23 Օգ. Մշտական յարձակմանց 24 ժամ շարունակ դիմանալով, սասունցի կանայք, բողբոջին ուժասպառ,

անկարող ահեղ թշնամոյն երկար դիմադրել, հետզհետէ կը քաշվին դէպի Կեփի. թուրքերը կը գրաւեն: Կանայք, գրկած մատաղերամ գաւակները՝ կը մարտնչեն ցան և ցիր, քարերով և խենջարներով ու կընկնին վերքերով ծածկված, յափշտակութիւն թշնամոյն: Քսամենլի տեսարան. բոլոր մնացածները կը թրատվին անխնայ: Մանկանց դիակները կը ձօձեն նիզակներու վրայ. կանանց աղիքները սուրերու ծայրերուն... Յուսահատութիւն վերին աստիճանի, քաջութիւն աննկարագրելի: Երբ կ'հասնին ի Կեփի, զերենք չորս կողմէ. շրջապատուած կը տեսնան ահագին բազմութեամբ: Փախուստ կամ Գրգօյին միանալ անհնարին է այլևս: Քիւրդերը կը աղաղակեն, որ անձնատուր ըլլան, ապա թէ ոչ... Սուկուս, իրարանցում, շփոթ, աղազակ, երեխայոց ճչերը երկինք կը թնդացնեն, Կեփի ստորոտէն կը գոռան թնդանօթներ: Գրգօյի հարսը Շաքէ, կուռի մէջ հերոսուհի մը հանդիսացած է. կը մարտնչէ բարձր քարաժայռի վրայէն և կը խօսէ բարձրաձայն. «Սասունցի կանայք, ձեզի մնացեր է արդ որոշել թէ լաւ է գերի երթալ քիւրդին, ընդունել Մուհամեդի պիղծ օրէնքը, անպատուել ձեր անեղծ սրբութիւնը ի նախատինս ամբողջ հայրութեան, թէ... հետևել իմ օրինակին». և հերարձակ, զուարդ, միամեայ երեխան ի ձեռին, կը խայանայ բարձր ժայռէն ցած, անյատակ անդունդի մէջ, քարքարոտ և ապառաժ, ուստի մի խունկ բխելով կը թռնայ Շէնիկցոց սրտերը, անոր արեամբ ներկուած... անոր օրինակին հետևեցան իւր ընկերուհիք մի առ մի, առանց տատանուելու, առանց շփոթելու և խեղճ տղայք հետևեցան իրենց մայրերու օրինակին, անգիտակից իրենց բաղդին: Տեսաւ թշնամին և կանգ առաւ. իրարու ետևէ կը թափուին դիակները ձօձալով օդի մէջ անձայն, անմըռուսչ և խոր անդունդը կը ծածկի դիակներով... վերջինները սաղ կը մնան իրենց քոյրերու դիակներու վրայ... Միայն 50-ի չափ կը ձերբակալուին և մի քանի հարիւր ալ մանկիկներ: Տանելով փաշայի առաջ, կը հրամայեն, որ ընդունեն Մահմեդի օրէնքը. անարգանքով կը մերժեն: Խիստ պատիժներով շատ հարցեր կուտայ Մուրադի, Տաւրոսիկցոց, Գրգօյի և Գէլըցոց մասին, սակայն ոչոք յանձն կանեն բառ մ'անգամ թողնել բերանէն: Անասելի չարչարանք, երկաթի շիկացած կաթսաներ և պրժգալի ցիցեր... Աերջապէս այն, ինչ որ կընայ ստեղծել վայրենի լերանց փաշաներու վրէժխնդիր կատաղութիւնն անպաշտպան թշնամու վրայ...

24 Օգոստ. Քաջ Գրգօն իր անպարտելի խմբով ի պարտութիւն կը մատնուի Հեղինի սարը, ուստի տեսեր էինք Անդոքի և Կեփիի տեսարանները. ո՞վ կարող է նկարագրել թէ ինչ անզուսպ կատաղութեամբ ձօձելով դատարկ շէշխանները, շողացնելով սրերը, քարերով և նաջաններով, անկարգ և շփոթ ամեն կողմէն կը յարձակին թշնամու վրայ, արեան ծովերով իրենց պապակեալ շուրթները, բոցավառ սրտերը, վրէժխնդիր հոգիները զովացնելու: Միայն 2 վիրաւոր փախստականներ դերծանելով կը պատմեն այս ամենը: Ալեանց Աարդան, խենջար ի ձեռին կը թրատուի մաս առ մաս, հարիւրաւոր վերքերով ծածկուելէն յետոյ կընկնի անկենդան և դեռ

արիւնոտ խէնջարը դուրս չի գար անոր ձեռքերէն....
 Կընկնի Իշխնձորի վարդապետը, մինչ կաղօթէ բազկա-
 տարած և Փորըս գիւղի նորընծան, արիւնոտ դիակներով
 ծածկելով իւր հետքերը: Գրգօն վիրահար գերի
 կընկնի, անօթութենէն ուժասպառ: Փաշայի առաջ կը
 բանայ աչքերը և հաց կուզէ. յանկարծ ինքնիրեն գա-
 լով կաղաղակէ. «Ամօ թ քեզ Գրգօ, դու էլ օտարին
 վիզ պիտի ծռես»: և խլելով մէկի հրացանը կը դիմէ իր
 քաջերով փաշայի վրայ: Կը շողան սուրեր, կը շաչեն
 հրացաններ և նոցա որոտմանց մէջ կը լսուի քաջազնի
 վերջին խօսքը. «Կեցցէ Հայաստան»:

ԿՈՒՈՒՒ ՀԵՏԵՒԱՆՔԸ

Գէլի 360, Շէնիկ 106, ՍՀմա 85, Ալեան 165, Իշ-
 խնձոր 78, Ադրին 66 տներով կայրեն ամբողջովին և
 բոլոր բնակիչները, բացի մաս մը փախստականներէ,
 սրէ կանցունեն: Շատախի, Բերմի, Խուլի և Խեյանայ և
 Փսանայ գաւառի բնակիչները, ըստ պետական արձանա-
 գրութեանց 146000 հոգի ընդ ամենը կը հեծեն սոս-
 կալի և անպատմելի նեղութեանց մէջ: Բոլոր արտերին
 քիւրդերը տիրանալով, գրաւելով տները, անդաստանե-
 րը, կողոպտելով բոլոր ունեցածները, թշուառներու
 մարմինն խլելով մէկ շապիկն էլ մերկ և անպաշտպան
 ցան և ցիւր կը թողուն, որ ոլոր գան, սարերու վրայ,
 վայրի գազաններու նման, երանի տալով խարոյկի վրայ
 բարձրացողներուն և զիրենք շրջապատող կուռ շղթան
 չի թողներ, որ գոնէ փախուստ տան և ազատեն իրենց
 լոկ անձերը....

Նոյն իսկ Մշոյ դաշտի հայ գիւղերը՝ Խզ լաղաճ, Տատ-
 րոգոմ, Ս. Յովհաննու վանքը, Մառնիկ, Խորունք պաշար-
 ման մէջ են, այնպէս որ չեն համարձակիր երթալ դաշտ
 արտերը քաղելու համար: Քիւրդերը արդէն Տատրոգոմ
 գրաւած են և միւսներէն կը պահանջեն, որ թողնեն
 իրանց տները, իրանց կալուածները և օրավարները, ել-
 նեն երկրէն, ապա թէ ոչ կեանքները ի զուր տուժեցնեն
 յետոյ, պիտի յանձնեն այդ ամենը: Կառավարութեան
 բողոքներ ի հարկէ անլսելի կը մնան: Մշոյ մէջ խիստ ձեռ-
 բակալութիւնը, Նագիկի երեք հօրեղծօր որդիք, երեք
 հարսներ բռնի տաճկացում: Սալի աղայի տուն: Ս. Կարա-
 պետի վանքէն երկու սարկաւազներ (Մոզսէս, Յարդին)
 և երեք միաբաններ բանտարկուած են: Կարճ խօսքով
 եթէ ժամանակին ազգու միջամտութիւն չը լինի ամբողջ
 200,000 հայեր պիտի դնան ոտից ի կոխան, առանց
 կարենալու իսկ իրենց արեան բողոքը լսելի ընել լուսա-
 ւորեալ աշխարհին....

Փախստական ուղևոր մը կը պատմէ, թէ Խէյալհանի
 մէջ ու էս Յոյնան տեսնելով 3 փախստական տղայք՝ 8-10
 տարեկան, կը յանձնէ կառավարութեան, որ կը զլխատ-
 տին Մշոյ հրապարակի մէջ: Քանի այսպիսի տեսարաններ,
 անյայտ, անորոշ.....

Ս Ա Ս ՈՒ Ն Ի Կ Ո Տ ՈՐ Ա Ծ Ը

ԵՒ
 ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Այն իւրաքանչիւր օր կրկնվող սպանութիւնները,
 կանանց և կոյս աղջկերանց բռնաբարութիւնները, ա-
 ոււանգութիւնները, այն անթիւ, անհամար գազանութիւն-
 ները, որ օր ցերեկով կատարում են տաճիկ և քուրդ
 բաշիբուզուկները 19-րդ դարու վերջում, լուսաւորված
 Եւրոպայի քթի տակ, այն անվերջ աւերումները, կո-
 դոպուստը, թալանը, հրդեհը, որոնց ենթակայ է Տաճկա.
 Հայաստանի բազմաչարչար, թշուառ, ուժասպառ ժողո-
 վուրդը, այս բոլորը շատ սակաւ է արժանացել Եւրո-
 պական մամուլի ուշադրութեան կամ նոյն իսկ դիտ-
 մամբ նա աշխատել է ծածկել: Բայց երբ այդ կոտո-
 ռածը, երբ այդ սոսկալի բարբարոսութիւններն սկսում
 են ընդունել Տաճիկ լայն շրջաններ, երբ նրանք անց-
 նում են տաճկա-հայերի համար իսկ ստեղծված, ըն-
 դունված «չափ և սահմանից», այն ժամանակ միայն
 Եւրոպական մամուլը «բարեհաճում» է մի քանի հատ
 ու կտոր տեղեկութիւններ տալ. միայն այդ ժամանակ
 դարձեալ բարձրանում է «Հայկական խնդիրը»: Նոյնն
 է և այս անգամ: Սասունում տեղի ունեցած սարսա-
 փելի արիւնհեղութեան և աւերման մասին Եւրոպա-
 կան լրագիրները տալիս են հետեւեալ տեղեկութիւն-
 ները, որ մենք առաջ ենք բերում համառօտակի:

«Լօնդօնի «Հայկական Ազգասիրական Միութիւնը» մի
 աղերսագրով դիմել է Անգլիական արտաքին գործոց
 մինիստր լորդ Կենքերլուն, հայցելով ոչնչացնել Տա-
 կա-Հայաստանում ներկայումս գոյութիւն ունեցող կա-
 ռավարութիւնը, փոխարինել նրան մի նոր կառավար-
 ութեամբ Անգլիայի հաւանութեամբ, որը պիտի գըտ-
 նվի վերջիս և Բերլինի դաշնագիրն ստորագրող տե-
 ռութիւնների անմիջական հսկողութեան տակ:

«Այդ աղերսագրին կցած է և մի նամակ՝ Բիթիլից
 սեպտեմբերի 27-ին գրած: Առաջարկելով այդ, Միութիւնն
 աւելացնում է, որ Հայաստանում կատարվում
 են նոյն գազանութիւնները, ինչպէս մի ժամանակ Բուլ-
 դարիայումն էր: Նա մեղադրում է տաճիկ կառավարու-
 թիւնը, որի հրամանով տեղի է ունեցել այս կոտորածը:

«Ահա նամակի համառօտ բովանդակութիւնը. Բրդե-
 րը գողացած են լինում հայերի տաւարը. վերջիններս
 յարձակվում են գողերի վրայ, սպանում են նրանցից
 երկու մարդ և վիրաւորում երեքին: Այս ընդհարու-
 մը պատրուակ է գառնում մի կոտորածի: Չօրքեր են
 ուղարկվում այդ տեղի վրայ: Այդ զօրքերի հրամանա-
 տար փաշան Պօլսից պատուէր է ստացած լինում բնա-
 ջինջ անել հայերին: Ապանված են 6-10 հազար հայեր:

«Մի տեղ չորս հարիւր կին; մի այլ տեղ երկու հա-
 րիւր բռնաբարվում, ապա սուկնների և թրերի հար-
 ւածներով մաս մաս կոտորվում: Երեսնաներին ցցի են
 հանում կամ գլխատում: Աեց հարիւր երիտասարդ աղ-
 ջկերանց հալածում, քշում են մի եկեղեցի, այստեղ
 բռնաբարում, ապա կոտորում: Արիւնը վտակներով հո-
 սում էր եկեղեցու դռներով:

«Օտարագրի հիւպատոսները քննութիւն են սկսել: Տաճիկ զինուորներից մի քանիսը խոստովանում են, որ հենց իրենցից իւրաքանչիւրը սպանած կը լինի մի յիսուն կին: 20-30 դիւղ աւերած, կործանված են: Մարդկանց նաւթով կենդանի կենդանի այրել են իրենց սեփական տան մէջ:»

Միւս կողմից Standard լրագրին միւսնոյն դէպքի մասին Վարնայից հեռագրում են. «Անկարգութիւնների պատճառը հարկերի վճարման մերժումն է եղել: Մուշի կառավարիչները հրաւիրում են Բիթլիսի նահանգապետին. վերջինս յայտնում է Բ. Իրան և իրաւունք է խնդրում ձնշել ապստամբութիւնը: Բ. Իրանը պատվիրում է Ձէքի փաշային կարգի տակ դնել բնակիչներին: Բայց Բիթլիսի նահանգապետը՝ չսպասելով Ձէքի փաշայի տեղ հասնելուն, յառաջ է մղում զօրքը և հրամայում է կրակ արձակել: Կոտորածն սկսվում է: Երբ նա վերջանում է, 25 դիւղ աւերված են լինում, գետինը ծածկված մի քանի հազար դիակներով: Բիթլիսի Անգլիական հիւպատոսը մի տեղեկագիր է ներկայացրել Կ. Պոլսի դեսպանին:»

Հաղորդելով այս տեղեկութիւնները, Եւրոպական մամուլի մի մասը իր պարտքը, իր կոչումը վերջացած է համարում: Իսկ միւս մասը, մասնաւորապէս անգլիական լրագիրները, ինչպէս օր. Times, պնդում են, որ անհրաժեշտ է ոչ թէ միայն սանձել զսպել ոճիրները, ոչ թէ միայն պատժել այդ ոճրագործներին, այլ նաև անհրաժեշտ է կատարելապէս փոխել գոյութիւն ունեցող կառավարութիւնը, որպէս զի կարելի լինի արգելել սոյնանման գազանութիւնների կրկնումը: «Այս դէպքերի շարքը ամօթ, խայտառակութիւն է լուսաւոր աշխարհի համար,» բացականչում է Փրանսիական Figaro լրագիրը: «Եթէ գոնէ այս արիւնոտ տեսարանների պատմութիւնը, ասում է մի այլ լրագիր, կարողանար շարժել Եւրոպայի անտարբերութիւնը, յիշեցնելով Բերլինի դաշնագիրն ստորագրող պետութիւնների պարտքը...»

«Այնտեղ, Հայաստանում, կատարվում են ոճիրներ, որոնք վրէժ են գոչում աղաղակում երկնքից, ոճիրներ, որ պէտք է պատժվին օրինակելի կերպով և որոնց կրկնումների առաջը պիտի առնվի ինչ գնով էլ որ լինի:»

Միւս կողմից մի քանի այլ լրագիրներ նոյնպէս խոստովանվելով, որ ամօթ, խայտառակութիւն է լուսաւոր աշխարհի համար այս անցքերը, բայց և այնպէս չեն կարծում, որ Եւրոպան մի որ և է քայլ կանի այդ առիթով: «Եթէ այդ լինէր մի յիսուն տարի սորանից առաջ, աւելացնում է Figaro-ն, գուցէ տեղի ունենար մի արշաւանք, իսկ այժմ՝ բաւականանում են միմիայն մի դիպլոմատիական նօտա ուղարկելով: Այժմ նա, այդ նախկին Եւրոպան, այլ հոգսեր, այլ պարավունքներ ունի:»

Այո, ճիշտ է նկատում Եւրոպական մամուլը, Եւրոպան այլ հոգսեր, այլ զբաղմունքներ ունի: Նրան ինչ, թէ այնտեղ մի ինչ որ Հայաստանի խորքերում 25-30 դիւղ բնակիչներով հանդերձ այրում, մոխիր են գարծնում, նրան ինչ, թէ այնտեղ բռնաբարում, մորթում, սպանում են, նրան ինչ, որ այնտեղ իր հիւպատոսների

աչքի առջև վեց հարիւր կոյս աղջկերանց հալածում լցնում են եկեղեցին, բռնաբարում, ապա այրում, կոտորում. նրան ինչ, որ այնտեղ մարդկային սպանդանոց է բացված և այդ սպանդանոցը մի ամբողջ երկիր է, նրան ինչ, որ այն տեղ հազարաւոր անմեղ մանուկներ գլխատվում, ցցի են հանվում, ո՞ր մէկը թւենք: Այս բոլորը տեսնում և լսում է Եւրոպան, բայց ինչ է անում նա: Ոչինչ. նա կողարկի Սուլթանի «բարեկերթ» կառավարութեան մի դիպլոմատիական նօտա և դորանով էլ ամեն բան կը վերջանայ, դորանով նա իւր պարտքը կատարած կը համարի:

Բայց ինչո՞ւ ենք մենք իզուր մեղադրում Եւրոպային: Մի՞թէ միւսնոյն անտարբերութիւնը չի տիրում և մեր, հայերիս մէջ: Ճիշտ է, մենք ևս սոսկալով կը կարգանք բոլորը, ակն ու վաշ կանենք, կը հառաչենք, կը խօսենք մի երկու երեք շաբաթ և ապա մոռացութեան կը տանք այս սարսափելի կոտորածն էլ և ձեռքերս ծալած կը նստենք, մինչև որ բոլորովին կաւերեն, հիմնայտակ կանեն, մինչև որ գլխովին կոնչացնեն աշխարհի երեսից հայ տարրը.

Ամօթ, հազար ամօթ և նախատիք մեզ և ոչ թէ Եւրոպային.

ՍԱՍՈՒՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ

Թուրք կառավարութեան խորամանկութիւնը.— Վերջին երկու իրեք տարիներուս ընթացքին մէջ ստրկացած հայուն ցոյց տուած յանդգնութիւն և ինքնապաշտպանութիւնը (իզուր մատնուած ձերբակալները խլել, անկանոն ոստիկանները ծեծել, հետզհետէ բարդուած տուրքերը չը տալ ևն.) թուրք կառավարութեան դուր չէր գայ, ուստի գիշեր ցերեկ ելք մը կորոնէր տեղոյս ըմբօստ հայոց դաս մը տալու, պատժելու: Վերջապէս ճարպիկ Բրդաւ և իւր խորամանկութիւնը յուշ բերեց ու հետևեալ խելքը բանեցուց:

«Իւրդ վեց եօթը աշիրաթներ Զէյլանի շեյխ Մեհմէտ-մէզի միջոցաւ գրգռելով՝ հանեց հայոց դէմ:»

Ո՞վ չգիտեր, որ անցեալ ամրան ափ մը Տալուրիկցի ժողովրդեան վրայ քալեցին 3000 քիւրդեր, յիշեալ հայերուն բնաջնջելու: Միւսնոյն ժամանակ երբ քիւրդերը պարտութիւնով ետ կը վերադառնային, թողնելով իրենց դիակներ, իրենց հետ տանելով բաւականին մեծ թալան, յանկարծ (կուռէն երկու երեք օր վերջ) Տիգրանակերտէն, Կիսճէն, Երզնկայէն, Բաղէշէն և Մուշէն հրաշքով զօրքեր թափեցան և օգնութեան հասան (ի հարկէ քրդաց) ու պաշարեցին զՏալուրիկ և նորա բոլոր գեղերէն, պատրուակելով, թէ խաղաղութիւնը պահպանելու համար եկած են ինչ մեծ հոգատարութիւն և արագ գործ ունէութիւն, եթէ ինքը կառավարութիւնը խորհրդակից չէր Շէյխին: Բարեբախտաբար պաշարումը 10 օրէն աւելի չբաշեց, չցրտեց որ կողմէն ինչ փրչեց և սև ամպերը փարատեց, եթէ ոչ ըմբօստ հայոց տանց հիմերը արևի դէմ չը բերած, մատդրութիւն չունէին հեռասալու:

Մի երկրորդը Շէյխ Ջէլլադին.— Կրկին տարաձայնութիւն կայ, թէ քիւրդ աշիրաթներն յիշեալ Շէյխի երկրորդ շէյխ Ջէլլադինի թելադրութեամբ կրկին կպատրաստվին անգամ մը ևս փորձել անտէր մնացած հասցերը կոտորելու: Անկասկած եմք, որ նորէն թուրքաց կառավարութեան խորհրդովն է որովհետև սա քաջ գիտենալով, թէ հայոց վրայ քիչ թէ շատ մեկէն ի մէկ զօրք քաշելը քաղաքական կերպարանք կարող է ստանալ, կը ջանայ աշիրաթական կուռի ձև տալ խնդրոյն, որպէս զի քրդաց աւերութենէն մնացածներն ալ ինք զօրքով քանդէ, ըսելով թէ խաղաղութիւնը վերահաստատելու եկած է, բայց ինչ յուսախաբութիւն. արդէն ամեն ինչ հասկցած է և ըստ այնմ պիտի ջանայ գործին որոշ կերպարանք տալ, եթէ մի անգամ անւանական խաղաղութիւնը սկսէ խախտել: Հայ գիւղացիք կը սենին ինչ վնաս մեզ տվին զօրքերը, անոր մի հինգերորդականը չտվին քրքերը, որք աւելի վայրենի են:

Քրդաց հարստահարութիւնը. Պատրզանցի քրդեր Փարակցի տղայ մը կը սպանեն, երբ սա Փարսիսէն հաց շալկած կը վերադառնայ իւր տուն ի միթարութիւն ընտանեաց: Պիմցի 25-30 տուն անթութիւնէ և քրդաց հարստահարութենէ ստիպեալ ներքին դաշտ երթալու ժամանակ բազրանցի քրդեր անոնց վրայ յարձակելով կուզեն թալանել, բայց Հայոց դիմադրութեամբ ոչինչ կը վաստկին, միայն մի քանի հայեր չարաչար կը վիրաւորվին:

Առհասարակ քրտերը հայերը իրենց ստրուկները և անոնց հոգերը իրենց սեփականութիւնը համարելով հասցերէն պէլ անուկով տուրք կը վերցնեն տարին. երեք անգամ: Ամեն հայ տուն իւր աղային կը վճարէ գարնան ծնած ոչխար մը, կաթի համար ամբան ոչխար մը՝ պըրը չո վի անուամբ. իսկ աշնան հաց և գէր ոչխար մը մնացորդի համար: Երանի թէ ամեն հայ տուն իւր պաշտպանութեան համար մի քուրտ աղա ունենար. հապա մի քանի աղաներ ունի, որոնց իւրաքանչիւրին պիտի տայ յիշեալ տուրքը: Քուրտ աղան եթէ նիւթական անձկութեան մասնով կամ դժգոհ մնայ իւր հայէն, կը ծախէ ուրիշ քրտու մը: Ստրուկ հայուն գինն այնքան աւելի արժէ, որքան աւելի տղայ ունենայ: Ատոնց հասուցած բոլոր չարիքներու նկարագիրը մէկ կողմ թողնելով՝ յիշենք աստ մէկ հետաքրքիր կէտ: Ամեն հայ իւր աղջիկը կարգած ատեն աղջկան համար ստացած խալայէն մաս մը իւր քուրտ աղային պիտի տայ: Այդ պարտքը կը կոչվի ա վըն ի: Շատ անգամ տեսնված է, որ հայը մը իւր աղջկայ համար մէկ, ոսկի խալա ստացած է և սակայն ինքն իւր աղային 2-3-4 ոսկի ավընի տուած է:

Որքան աչքի կիյնայ այն կէտը, որ քուրտը իւր շահուն համար իւր հայուն կեանքը կը վտանգէ, իսկ հայը իւր և իւր որդոց համար օրինակ չառներ իւր աղայէն:

Քուրտերն, որք ամեն անգամ վայրենութեամբ յարձակում գործած են հայերու վրայ, ոչ այնքան կրօնամոլութեամբ, որքան շահախնդրութեամբ եղած է (իցիւթէ իրենց իսկական շահը ըմբռնէին. այն ատեն միացած պիտի լինէին հայոց հետ): Այժմ տեսնելով, թէ հայոց մօտ բան չէ մնացած և եղածն ալ դիւրութեամբ

չեն տար, սկսած են զիրար թալներ: Պատգանցի և Խիսանցի քրտեր միասին կերթան Սըլըվանցի (Պանօքցի) քրտաց ոչխարը կը թալեն. բայց ասոնք Խաչալկայ կամուրջին մօտ կուկուկ ետ կը խլին. երկուստեք 7 հոգի կը վիրաւորվին: Խիսանցի կը թալեն Պօլքըցիներու (Սասունցի) քարանէն 8 բեռ հաց ջորիներով, իսկ նոյն քարանի մնացած 25 ջորիք իրենց բեռներով կը խլէ Պըշարի Խալիլը: Բագրանցի Գագօթի Էօմէրը խլած է Սասունցի Պըշարի Միրզօթի տղուն այնալուն և ըեմօլվերը: Պարքի և Շիկօթի տուն ըսած աշիրաթները իրար զարնվեցան. մի մեռած ու մի քանի վիրաւորեալներ ունեցան:

Վայրենի քրտերն անգամ ունին իրենց քաղաքականութիւնը միամիտ հայերը խաբելու համար. օրը անգամ մը սուտ մը կը հնարեն. օրինակ՝ «հայերը ջարդելու ֆիրման ելած է», ևն. ևն. քանի, քանի անգամ սուլթանը իւր զահէն վար կիջեցունեն, կրօնականն ու վեր կը հանեն, տեսնելով թէ իրենց շահուն ինչպէս յարմար կուգայ:



Ն Ա Մ Ա Կ Մ Ա Ր Ջ Ո Ւ Ա Ն Ի Ց

Մարզուան, Եւրոպիա, Ամասիա և շրջակայ գիւղորէից հայ բնակչաց վիճակը տաժանելի է և օր աւուր կը ծանրանայ: Բանտերուն խորքէն ծերոց և տղայոց, մեծատանց և աղքատաց հառաչանքները, դրսէն կանանց և մանկանց լաց ու կոծերը մինչդեռ խղճի տէր մարդու սիրտը կը մաշեցնեն, բարբարոս կառավարութեան հայոց անհաշտ թշնամի պաշտօնէից սիրտը աւելի կը քարացնէ և զօրութիւն կուտայ իրենց վայրագութիւնները շարունակել և իսպառ ջնջել ոչ միայն հայ անուկը այլ և Հայ ժողովուրդը:

Երբ Շմաւոն Մարզուանի մէջ բռնվեցաւ տեղական Պեքիր փաշան իւր անգթութիւնները կրկնապատկեց յօգուտ իւր քսակին. անմեղ անպարտ հայերը խուճախուճախութեամբ լեցուց. ոստիկանաց սաստիկ հրաման տուաւ, որ ուր որ հայ մը, նամանաւանդ հարուստ մը տեսնին՝ անմիջապէս բանտարկեն: Պեքիր փաշայի յիշեալ հրամանը կէտ առ կէտ կատարվեցաւ և ուր որ հայ մը երևան ելաւ, հայութիւնէ զատ առանց յանցանքի, անմիջապէս բանտարկվեցաւ և բարակ, անհիմն հարցաքննութենէ վերջ՝ մեծ մեծ գումարներ տալով յիշեալ փաշային գէթ առժամայն ազատ արձակվեցաւ: Երբ Պեքիր փաշան ի պատիւ իւր գործած անգթութեանց և կաշառակերութեան սուլթանէն Ամասիայի միւթասէրիֆ կոչվեցաւ իւր յաջորդը ևս քսակը լեցնելու համար փորձեց կաշառատութեամբ ազատ արձակված հայերը վերստին բանտարկելով ստակ փրցնել: Սակայն երբ իւր քսակը պարպ մնաց, զայրացած՝ սկսաւ հայերն ընկծել. 4-5 ամիս է առանց հարց ու փորձի մուլթ բանտերու խորշերը թողած է:

Երբ բանտ անուկը կուտանք, պէտք է հասկնալ տաժական բանտ իրեն յատուկ ամեն արհաւիրքներով, որ շատ անգամ նկարագրած է. փոքրիկ սենեակ մը, ուր հազիւ 10 մարդ կարելի է քնանալ, 20-30 կը լեցնեն:

Բանակն ազատ կեցող հայոց վիճակը գրեթէ բանտարկեցող վիճակէն ծանր է. քաղաքին մէջ պտտելու, խանութ բանայ, և առևտուր ընելու, եկեղեցի երթարև համարձակութիւնը չունին: Երբ համարձակին իրենց անէն դուրս ելնելու, յաճախ կը պատահին թուրքի մը, որ հայու գլխուն հազար ու մէկ լուտանքներ կը թափէ. հայը պիտի համբերէ, եթէ ոչ անմիջապէս թուրք խուռն բազմութիւն մը շուրջը կը պատեն և ձեռները կապած բանտ կը տանին, սուտ երգմամբ կը հաստատեն անոր չունեցած մեղքերը...

Այլ հայերու համար իրենց պահանջները ժողովել, առևտուր ընել, կամ գիւղերը երթալ, գաղթել անհնարին է հայք ուր որ են, հոն պիտի մնան, կը տնօրինէ իրատէ մը: Արդէն իրատէի կարօտութիւն ալ չկայ, ինչու որ հայ մը եթէ գիւղ մը երթայ, դեռ իւր առնելիքը չպահանջած, լաւ մը կը ծեծվի և ապա կապ բանտը կը փոխադրվի իբր «կոմիտէ»: Ե՛հ, խեղճ թուրք գիւղացին ի՞նչ մեղք ունի, քանի որ կառավարութիւնն այդպէս կը պահանջէ:

Գաղթել, ոչ թէ օտար երկիր, այլ մերձակայ քաղաք մը, անկարելի է. 5 դօշ. արժող անցագիրը 100 դուրուշով հազիւ կարելի է առնել. եթէ անցագիր առնելով ձամբայ ելնէ, հազար ու մէկ փորձանքներու կը պատահի:

Այս օրերս հայ ննջեցեալ մը կը տանէին գերեզմանատուն. խումբ մը տաճիկներ թաղման հանդիսականները կը քարկոծեն, անէծք, անարդանք կը լծափեն հայոց գլխուն և կրօնին, քահանաներուն խաչվառ կը խլեն և ցետերու մէջ կը թաթխեն:

Հայոց այս անտանելի վիճակն աւելի կը ծանրացնեն խումբ մը սեհոգի մատնիչներ, ինչպէս Մարզուանցի Խըրիմցու ընտանիքը, որ սուլթանի թունաւոր ընծաներէն մաս մը ստանալու համար, սուտ մը կը հնարեն, թէ հայերը իրեն 10-12 տարեկան տղան մեռցնելու փորձ մը ըրած են: Կառավարութիւնը, որ այդպիսի լուրերու կըսպանէ անհամբեր, անմիջապէս կը բանտարկէ խումբ մի հայ ևս: Յիշեալ ընտանիքն իրեն յաջողութիւնը տեսնելով՝ կը յայտնէ, որ այլ ևս չի կրնայ այստեղ կենալ, և որ կայսեր ողորմած պաշտպանութեան կարօտ է: Տեղակալին որոշմամբ մի քանի օրէ վերջ Պօլիս կը փոխադրվին և յիշեալ տղան կայսերական ծախքով դպրոց կը տեղաւորվի:

Ահա այս կողմերու հայութեան արդի վիճակը: Բազց, թշուառութիւն, անպատուութիւն, կաշառք, թալան, բռնաբարրութիւն, մատնութիւնք ամեն կողմ:

Ն Ա Մ Ա Կ Ե Ի Դ Ո Կ Ի Ա Յ Ի Յ

Եւզոկիոյ սուրհանգակին կողպտվելը ծանօթ դէպք մ'է սոյն դէպքի վրայ ինչպէս շատ քաղաքներէ նոյնպէս Սեբաստիայէն Ալօ բէյը համիտիէի զօրք և ոստիկանաց խումբ մը գալով՝ քաղաքը կը պաշարեն, և փոխանակ լեռները փնտռելու «գոմթիթէն» կը սկսեն քաղաքին մէջ խուզարկութեանց: Հայերը ահ ու գողով

ձգելով իրենց տները 10-15 ընտանիք կը հաւաքուին մէկ տուն: Քաղաքը կը խուզարկեն և աչքի ընկած հայերը կը բանտարկեն. միւս կողմէն այգիները կը սկսեն վարել, հերկել պահած դանձերը գտնելու համար. ժամագործ Տիգրանի այգիէն 100 ոսկինոց մէծիդիէ կը գտնուի տոպրակով. Տիգրանը կը պնդէ, որ երկիւղէ պահած է իւր ստակը, որուն առանց մտիկ անելու կը բանտարկեն: Արդը վասակներուն կուգայ 10-12 տարեկան տղայ մը, որ շուկայէն հաց առած, առանց ետին նայելու կերթայ և ուղղակի դուռ մը կը զարնէ, մէկ մ'ալ կը դառնայ կը նայի, որ զինքը երկը հոգի կը լըտեսնէ, ձանբան կը շարունակէ. լըտեսք տղին ուր երթալը կը հարցնեն, պոռալով կըսէ. ինչ իրաւունք ունիք տունս տարած հացիս իսկ խառնվելու: Յիշեալ ամայի տունը պատասպարովը երեք երիտասարդները տղուն ձայնէն վտանգը կը գուշակեն և հարևան տունը կը ցատկին պատին վրայէն, երկուքը կազատին, իսկ երրորդին ոտքը կը կոտրի, որը սողալով ինքզինքը տան մէկ մուտ խորշին մէջ կ'ապաստանէ: Տունը կը խուզարկվի, հարիւրապետ մը կաղը կը նըշմարէ և անձնատուր ինելը կառաջարկէ և ատրճանակին հարուածը կ'ընդունի ի պատասխան: Հարիւրապետը գետին կը գորի, ոստիկան մը կը մտնէ, նոյնպէս հարուածով մը ոստիկանն ալ կը գլորի և երրորդ հարուածով երիտասարդը իւր կենաց վերջ կուտայ: Թուրքերը կը կատրին և կը յարձակին տուներու վրայ: Հայք ևս թըբաց դէմ դնելով, գիշերուան ժամը մինչև եօթը կը կուռին և երկու կողմէն գրեթէ 15 մահ և 180 վիրաւոր պատահելով, վերջ կը տրուի: Իսկոյն Սեբաստեա կը հեռագրեն, կուսակալը կուգայ և իբրև թէ հասարակութիւնը կը հանդարտեցնէ: Հայք, բողոքականք, կաթոլիկք և յոյնք ճարահատ կառավարութեան կը դիմեն միութեամբ թըբանալու համար, ասոր հետևանքէն լուր չունինք:

Եռոզատի զինուորական ատեանը՝ որ գաղատեայ փոխադրված էր, Եւզոկիոյ բանտարկեալք ևս Գաղատեա խրկվելու համար, 18 կառքով շղթայակալ Եռոզատ կը բերվին: Բանտարկեցող մէջ երիտասարդ մը հինգ-վեց ընկերներով շղթայէ զուրկ մնացեր է առ ի չգոյէ. երիտասարդը հարիւրապետի մը երկու արծաթ կուտայ, որպէս զի շղթայ մ'ալ գտնելով իրեն զարնէ, ըսելով թէ, քանի որ ոտքերնիս, վզերնիս շղթայ չունինք, Գաղատեա ի՞նչ երեսով պիտի երթանք: Ի վերջոյ գործը կը փոխվի, այսինքն զինուորական ատեանին Եւզոկիոյ փոխադրվելու իրատէ ելլելով՝ բանտարկեալք հեռագրաւ մը վերստին յԵւզոկեա կը վերադառնան. զինուորական ատեանը յԵռոզատ կատարած չարութեանց, չարագործութեանց և բարբարոսութեանց պակասը յԵւզոկիա պիտի լրացնէ և իրենց անկուշտութիւնը հայու արիւնով, նրանց արտասուներով և լաց ու կոծով պիտի կշտացնէ:

ԿԱՌԱՂԱՆ ԵՈՂՁԱԳՈՒԹ

Թիրայր յեղափոխականը 10 ձիաւոր ընկերներով հանդերձ ժուռ կուգար Եոզղատի շրջակայ գիւղերը և թէ ի հայոց, թէ ի խրջլպաշներէն կը յարգուէր ու կը պաշտպանուէր: Թիւրք կառավարութիւնը «մօրուք» անուան տակ այդ տեղի յեղ. պետը և խմբին գոյու-թիւնը և մինչև իսկ Մազար օղլու գիւղացի Սիմօն և Ագթաղ, Մատենցի յոյնին սպանիչը այն խմբին լինելը գիտէր, սակայն համարձակութիւն չունէր վրան երթալու և որչափ ալ պահեստի զօրաց թիւրք աւելցուց շուրջ 2000, ոստիկանաց 400 և Պոսէն հեծելազօր եկաւ, դարձեալ բաւ չէր այսքան զօրութիւնը «մօրուք» ձերբակալելու, ուստի դիմեց դաւաճանութեանց:

Թրքերը փեօհրէնկի համբարձում քեահիայի տղան Սահակը բռնելով Եոզղատ կը բերեն և Խալիլ բէին կը յանձնեն: Համբարձում քեահիային թիրայրին պաշտպան լինելը քաջ ծանօթ էր կառավարութեան. սորա տղան Սահակը վերջին աստիճան կը տանջեն և կը նեղեն և վերջապէս հօր ամեն գաղտնիքները կը խոստովանեցնեն թիրայրին նկատմամբ: Հայրը՝ Համբարձում քեահեան ևս կը բերեն քննութեան, կը հարցաքննեն, ոչինչ յայնժամ առանց որդւոյն անունը տալու, (որովհետև խօսք մը կար, թէ Սահակը թուրքերը մեռուցած են) Խալիլ բէյը Սահակէն բռնութեամբ առած գաղտնիքներուն ամենն ալ կըսէ Համբարձում քեահիային և կը յաւելու. «թէ մօրուքը մեզ յանձնես, որ կարող ես, ես քո տղան Սահակը կը գտնիմ և զքեզ ալ կազատեմ, իսկ եթէ հակառակ այս ամենուն՝ չյանձնես, գիտցիր, որ դուն և քո բոլոր ընտանիքդ բնաջինջ պիտի ըլլաք:» Համբարձումը կը զարմանայ գաղտնիքներուն և խորհուրդներուն յայտնուէն և կը նայէ, որ ալ ազատութիւն չիայ, «մօրուքը» կառավարութեան յանձնելու խոստումներ կուտայ և կազատի: Այս ժամուն ի դարման ցաւոցն պատրիարքարանէն Եոզղատ ղրկված Տրդատ վարդապետ Պալեանը, առաջնորդ Աեսարիոյ վրայ կը հասնի և կսկսի գործել ի սաստումն ցաւոցն, ձեռքէն եկած վատութիւնները կը գործէ ընդ-քօղեալ սգիմով, հայ գիւղերու քահանայ և կրօնաւորները կառավարութեան միջոցով Եոզղատ կանչել կուտայ, խոստում կառնէ հայ գիւղացիներէն կնքոյ տակ, թէ «յետ այսու բոմիթէ չպիտի պահենք, տերութեան իրաւացի պահանջքը եղող տուրքերուն դէմ չպիտի գանք» ևն. ևն. բովանդակութեամբ, իւրաքանչիւրը զատ զատ կը խրատէ, առանց կարմրելու կը քարոզէ յեկեղեցւոյ, թէ «մօրուքը բողբախան է», իբր թէ թուրք եղած ըլլայ, թէ Եոզղատցիք խաբված են, մօրուքը խաբեբայ լիբը մ'է, թէ իրենց հարս ու աղջկուք նորա յանձնած են, թէ տները աւետարան կարդալը արգելեալ է, թէ ինք կարող է մարդ մը կախաղան տալ և առնել ևն. ևն: Արսլանեան գերդաստանն «վասակաց խումբի» հետ կը միանայ. զինուորական ատեանը ինչ հրահանգ որ ապր. անտարբեր կը կատարէ, ստդին անդին վասակներ կը կարգէ, վերջապէս ամեն կողմեր լրտեսներ կը ղրկէ թիրայրը փնտռելու համար,

որը կը պատրաստէր Եոզղատի շրջականերէն մեկնելու: Իմաց կը տրւի Համբարձում քեահիային. վերջինս թիրայրին հաւատարիմն էր, լուր կը խրկէ թիրայրին, որ ձիերը Պահատըրի այգեստանը թողլով, իւր քով գայ, ինք կարող է զինքը պաշտպանել, ինչպէս կը պաշտպանէր առաջ: Թիրայրը այս լուրը առնելուն պէս, կատարեալ վստահութեամբ ձիերը թողլով, կուգայ Համբարձում քեահիային քով, որը թիրայրին ոտքը կնատով, կը պատմէ եղելութիւնը և իւր ընտանեաց մօտագայ վտանգը, վերջապէս զինքը կառավարութեան յանձնելու ստիպումը: Թիրայրը պահ մը խորհելէն վերջ կըսէ, թէ Թերզելի երեք օրուան համար կարգադրելու կարևոր գործեր ունի և վերցնելու թղթեր ունի և թէ թղթերը ձեռք անցնին, աւելի մեծ վտանգ կը պատճառէ կը խնդրէ, որ երեք օր միջոց տայ և իւր գործերը կարգադրելէն վերջ թող յանձնէ զինք կառավարութեան և կուգայ ի Թերզելի, իւր ընկերները ի Թերզելի կը պահէ, ինքն ալ, որ 120 ոսկի ունի եղեր, իւր քով կը խնդրէ գիւղացիներէն, որ այդ 120 ոսկու փոխարէն իրեն ձի մը տան: Գիւղացիները չեն համաձայնիր: Այս միջոցին 1000 ձիաւորներով կը պաշարվի գիւղը: Թիրայրը գիւղին քահանայէն կուզեն և մերձ ի մահ կը ծեծեն, բայց ի գուր ի վերջոյ գիւղը խուզարկելով, կը ձերբակալեն թիրայր և տղաք և յաղթանակաւ մը կը բերեն Եոզղատ: Թող պարծենան վասակներն իրենց յաջողութեանց համար:

Բանտարկութեան առաջին գիշերը թիրայրը կը տանջեն, Եոզղատի գործող մարմինը խոստովանեցնելու համար և մասամբ իւր կը յաջողին: Առանց որ և է մարդու մը տեսնվելու, 17 օր բանտարկելէն վերջ մարտ 24 հինգշաբթի գիշեր կը բարձրացնեն ի կախաղան: Դիակը ժամը 6-ին վար կառնեն և կը տանեն յեկեղեցին: Տրդատ վարդապետ կը հրամայէ, դիակը բողբախանաց ժողովարանը կը տանին, սոքա ալ Տրդատայ դէմ զայրացած՝ չեն ընդունիր, և դիակը քարերու վրայ քաշկրտելով, մի քանի թուրք հասարակաց գերեզմանէն դուրս փոս մը փորելով, կը ձգեն և կը ծածկեն հողով: միւս գիշերը թրքերը գերեզմանը բանալով՝ մեռեալը կը կողոպտեն, կը հանեն հագուստը, ոտնամանը, մատանին, ժամացոյցը և անթաղ թողլով՝ կերթան կառավարութիւնը նորէն թաղել կուտայ: Ահա այսպէս կը կնքէ իւր մահկանացուն ողորմելին թիրայր, իսկ Տրդատ դահիճն ալ իւր պաշտօնը լրացուցած լինելով միւս օրը փառաւորապէս կը ձամբորդէ գէպ ի Աեսարիա իւր պշխատութեանց փոխարէն թուրք շողբորթութեան արժանացած:

Համբարձում քեահիային տղան, Սահակը, որոյ Խալիլ պէին տունը սպանված լինելը կը պատմուէր, բռնութեամբ կը թուրքացնեն և կը թլպատեն, մօտերս ազատվելով՝ ուղղակի կը միանայ ասպատակաց խմբին:

Դաշակցութեան անձանօթներից խնդրվում է թըրթակցութեան և նուիրատուութեան համար գիմել՝ L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշակցութեան ազատ տպարան

ՀԻՆՔ ՀԱԶԱՐ ՆԱՀԱՑԱԿՆԵՐ.

ՍԱՍՈՒՆԻ կոտորածի բոթաբեր լուրը կայծակի արագութեամբ տարածուեց ամեն տեղ եւ ցնցեց մեզ բոլորիս: Կատարուեց բռնակալ տէրութեան վաղեմի իղձը. Սասունի առիւծները ընկան անհաւատար կուռի մէջ. Սասունը՝ կտրիճների այդ անվեհէր հայրենիքը այժմ աւերուած է եւ ներկայանում է նահատակների մի մեծ գերեզման...

Հայե՛ր, արիւն էիք պահանջում ժողովրդից—նա արիւն թափեց. կասկածներ էիք յայտնում նրա կոռուելու ընդունակութեան մասին—հերոսութեան անթիւ ապացոյցներ տրուեց. խնայում էիք նրանից ձեր օգնութիւնը. եւ նա՛՝ ամբողջ աշխարհին լսելի արեց իր ձայնը:

Եւրոպան, չահասէր, դիպլոմատ Եւրոպան անգամ վրդովուեց մուսուլմանների կատարած այդ զազանային արիւնհեղութիւններից. Եւրոպան նոր գլխի ընկաւ, որ Հայաստանում այժմ կատարվում են «Բուլղարական սարսափները»... Սասունի լեռներում ընկած 5000 ՀԱՅԻ ԴԻԱԿՆԵՐԸ, նոցա արեան հեղեղով ներկուած քարերն ու ապառաժները բողբոջում են երկնքին ու արդարութիւն պահանջում: Արդարութիւն. . . խեղճ նահատակներ... Դուք մեռաք հաւատով, մեռաք ոգեւորուած այն յոյսով, որ ձեր արիւնը գութ կը չարժէ մարդոց սրտերի մէջ. դուք մեռաք, որ ձեր կենդանի մնացած եղբայրների համար արդարութիւն վաստակէք: Բայց, դուք չը գիտէք, որ աշխարհիս արդարութիւնը սուրն է, հրացանն է, թնդանօթն է:

Հայե՛ր, օգտուելու ենք գոնէ այժմ այս սոսկալի, միեւնոյն ժամանակ եւ խրրատական դասից, որ տալիս են մեզ բռնակալները. հասկանալու ենք վերջապէս, որ Հայաստանում այսօր դէմ առ դէմ կանգնած են երկու թշնամի տարրեր. մի կողմից՝ բռնակալ թիւրքերը իր աւագակ ջրդերով ու նիզամներով. միւս կողմից՝ անգէն, անօգնական եւ իր ազատութեան համար նահատակւող հայ ժողովուրդը. մինը վճռել է՝ իսպառ

բնաջինջ անել հային, միւսը՝ կոռուել մինչեւ վերջը, մինչեւ իր արեան վերջին կաթիլը...

Պատմական հանգամանքների անխուսափելի հոսանքը մղում է մեզ դէպի կռիւ, եւ խաղաղութիւնը մեր եւ տաճիկների մէջ այլեւս անդառնալի է: Այսօր Սասուն, վաղը Մուշ, Վան, էրզրում, Բաղէշ եւ այլն ոտքի են կանգնելու. ազատութեան կռիւը ընդհանուր է. եւ հրդէհի պէս բռնկելու է շուտով ամբողջ Հայաստանը: Պատրաստուենք, հայե՛ր, այս մեծ եւ փառաւոր կռուի համար. մտնենք այդ կռուի մէջ, առնենք մեզ վրայ նրա բոլոր ծանրութիւնը, չը վհատենք, չը թուլանանք:

Գրգոնների, Շաքէների եւ այլ հազարաւոր նահատակների ոգիները սաւառնում են մեզ վերայ եւ յորդորում են մեզ նոյնքան սիրել, պաշտպանել անբաղդ հային, որքան իրենք են սիրել:

Մե՛նք, հայ յեղափոխականներս՝ տեսնելով մեր եղբայրների նահատակութիւնը, նախանձում ենք նրանց փառքին, ափսոսում ենք, որ մենք էլ նրանց հետ չը մեռանք, ափսոսում ենք, որ մեր արիւնը չը կարողացանք խառնել Սասունի հերոսների արեան հետ: Եւ այժմ, որովհետեւ մենք կենդանի ենք, որովհետեւ մենք ընդունակ են ըզգալու եւ հասկանալու այդ ամենը, մենք երդվում ենք ամբողջ ազգութեան առաջ, չը խտտորել մեր ճանապարհից, երկաթի կամքով եւ հաստատամտութեամբ յառաջ տանել յեղափոխութեան գործը, մինչեւ որ ամբողջ ժողովուրդը կը միանայ մեզ հետ, մինչեւ որ նա ընդունակ կը լինի ո՛չ միայն զոհվելու, այլ եւ յաղթելու իր թշնամուն... Սասունի լեռներում ընկած 5000 սուրբ նահատակները թո՛ղ վկայ լինեն մեր այս երդմանը: Վրիժու կրակը երբէք չէ մարելու մեր մէջ...

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»

1894, 15 Նոյեմբերի, Վիէննա